





անձանց վրա, հասարակութիւնը իրան արդարացում է նոյն խօսքով՝ «մարդիկ չը կան»:

Կար ժամանակ, երբ մեր կեանքի մէջ պահանջ չը կար հասարակական գործողների. հասարակական հիմնարկութիւններ չը կային, կամ կային շատ քիչ, չը կար քննադատութիւն, կոնտրոլ, խտտապահանջ հասարակաց կարծիք: Այնպէս որ մի և նոյն անձը՝ միաժամանակ մի քանի պաշտօններ էր ստանձնում, և այդ պաշտօնները իր ձեռքի մէջ պահում էր տասն տարիներ շարունակ: Եւ այդ պայմանների մէջ մ արդ կ անց պահպանութիւն էլ, կարծէք չէր զգացվում...

Այժմ փոխված են պայմանները. հիմնարկութիւնները շատացան, հասարակական պաշտօնների թիւը տասնապատկեց, տասն, քսան մարդու տեղ հարկաւոր են հարկւրաւոր անձեր, և այդ անձերից պահանջվում է պարտաստութիւն, եռանդ, գործ: Այլ ևս չը կայ ամեն բան վարագործող ներդաշնակութիւնը. նրա տեղ երեւան է եկել խտտապահանջ քննադատութիւն, մի և նոյն անձանց հասարակութիւնը նոյն պաշտօնի մէջ երկար չէ պահում, ձգտելով նորերին ընտրելով, աւելի լաւերին գտնել. և ահա այդ պայմանների մէջ անդադար հարկաւոր են ն ո ր մ արդ է կ, ն ո ր ո յ ժ ե լ, ն ո ր գ ո ր ծ ո ղ ն ե լ...

Իսկ մեր ինտելիգենցիան, տարաբաղադար, բաւարարութիւն չէ տալիս այդ աճող, տանապատկող պահանջներին: Նոր ոյժեր ինտելիգենցիայի չըլնում քիչ են երևում. հասարակական գործողների նոր, կենսունակ, թարմ չարքեր չեն կազմվում, և այդ պատճառով մինչ մի կողմից կենսից նոր, բազմաթիւ մարդիկ է պահանջում, միւս կողմից նոր սերունդը հասարակական գործողների շարքը չէ վերանորոգում նոր ոյժերով և նոր գործողներով:

Եւ ահա հէնց դա է պատճառը այն չարքադող, անդադար կրկնվող, և իրօք գոյութիւն ունեցող երեւոյթի, թէ «մարդիկ չը կան»:

Խ. Մալումեան

ԳԻՒՂԱԿԱՆ ԻՆՔՆՈՎԵՆԹԻՆ

Հարկաւոր են համարում մեր ընկերացողների ուշադրութիւնը դարձնել մի նշանաւոր փոքրիկ վրա, որ կատարվել է գիւղական շրջանում, հարաւային Ռուսաստանում, և որի մասին շատ խօսվում է մայրաքաղաքում: Այդ փոքր վերաբերում է գիւղացիներին ընկերութիւնը հարստութիւնների, արեւմտեւոր եւ զաւակներին ներկայացնող արդիւնաբերական ներկայացում:

Ձգաւոր գիւղացիներ, որոնք նոյն իսկ լծկան տաւար չունեն և ամենահարկաւոր երկրագործական գործիքները զուրկ են, միանում են միմեանց հետ, կազմում ընկերակցութիւն և ընդհանուր ուժով գնում են հարկաւոր իրերը: Միացած ընտանիքները խառնում են իրանց խտանաբլուր, աշխատում են միասին, հնձած հացաբլուրները հաւաքում են մի տեղ և յետոյ բաժանում միմեանց մէջ:

Առաջին ընկերակցութիւնը կազմվել է 1894 թ.ին և այժմ արդէն գործում են հարաւային Ռուսաստանում տասնհինգ ընկերակցութիւն, իսկ կազմակերպվել են՝ ներկայ թվականին սկզբնաւոր իրանց գործունէութիւնը՝ հարկւր ընկերակցութիւն: Այդ գործի նախաձեռնութիւնը պատկանում է լեվիտակի անունով մի պարսիկ, որի անսխիւական հակողութեան տակ բացվել և գործել են այդ նոր և հետաքրքիր հիմնարկութիւնները:

Ընկերակցութիւնները աղող փորձեր են արել նոր կատարել և աւելացնել տեւական գոլթաններ, հնձելու և կալելու մեքենաներ գնելու և նոյն իսկ լրացնել իրենց ստանդարտը: Առաջին աղող փորձերից ոգևորված, հարսան գիւղերում սկսում են մտածել նոյն տեսակ ընկերակցութիւնների կազմելու:

Գործի ընդարձակվելուն արգելք է հանդիսանում սկզբնական զբաղմունքի պակասութիւնը: Այսպէս այդ գործը այնքան հետաքրքրութիւն է դարձնում, որ երկու անգամ բարեբարներ արեւել են դրա համար խնայող ն ու ի ր ա տ ու թ ի լ ի ն ի մէջ մէկը 200,000, իսկ միւսը 10,000 ռուբլի: Ազատ-անտեսական ընկերութիւնը որոշել է ցոյց տալ իր մեծ համակրութիւնը և իր կողմից 1250 ռուբլի տալ այդ գործի համար:

Ձեռնպահները շատերը լուրջ ուշադրութիւն են դարձրել այդ գեղեցիկ և գրաւիչ փորձերի

վրա և մտադիր են իրանք ևս կրկնել զանազան տեղերում: Յոյս կայ, որ կառավարութիւնը դրամական օգնութիւն տալ ընկերակցութիւններին, բանալով նրանց համար յայտնի չափով կրեզիտ:

Մեր Անդրկովկասի գիւղերը նոյնպէս մեծ կարօտութիւն ունեն միացնել գործունէութիւն և կրեզիտի: Շատ ցանկալի է, որ լեվիտակը նախաձեռնութեամբ սկսած այդ օգտաւէտ գործը կատարելապէս աղողի և այլուի-սով գիւղական ինքնօգնութեան մի գեղեցիկ օրինակ տրվի, որից կարողանայ օգտվել և մեր գիւղացին:

Այդ գործի մէջ ի հարկէ մեծ նշանակութիւն ունի և գործողների եռանդը ու անձնութիւնը: Ահա մի դէպք ևս, որտեղ տեղական ինտելիգենցիան կարող է օգտաւէտ գործ կատարել գիւղական աշխատանքի համար:

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԳԻԾ

Նորերս, ինչպէս հայտնի էր մայրաքաղաքի լրագրիչները, պետական խորհուրդը հաւանութիւն տուեց առեւտրական կրթութեան օրինադէմ, որ ներկայացված էր նրա քննութեան: Այդ օրինադէմը աւետարական դպրոցներ ունեւ է բացվել պետութեան զանազան մասերում:

Աւետարականների մէջ կրթութեան կարեւորութիւնը վաղուց է զգացվում, մասնաւոր մեր ասիական երկիրների նման անպատաստ և տգէտ տեղերում, ուր առևտրի հիմնական սկզբունքն է հաստատահարել թէ՛ նրան, ունիցի ապրանք են գնում և թէ՛ նրան, ում ապրանք են ծախում: Նոյն իսկ եւրոպական երկիրներում աւետարականները դեռ չեն կարողացել մարել իրանցից այն մեղադրանքները, որ իրաւամբ արել են նրանց վերաբերութեամբ թէ՛ արդիւնաբերական և թէ՛ սպառողները. ո՛րք մնաց արեւելեան վաճառականութեան դրութիւնը, որ նպաստաւոր պայմաններ չունէր կանոնաւորվելու համար:

Ոչ մի դաստիարակ հասարակութեան մէջ չէ ենթարկվել այնպիսի խիտ ընդհանրացում թե՛ ան և յարձակումներին, ինչպէս աւետարական դասակարգը: Այն մութ և ծուռ ճանապարհն էր, որոնցով տանեակ և հարկւրաւոր տարիներ ընթացելով ձեռք են բերվել միլիոնաւոր հարստութիւններ, արեւմտեւոր եւ զաւակներին անուշը և պատիւը: Այն ծանր և խեղդող մթնոլորտը, որ ընտելացրել է փողի համար գոհել բարոյական ամենաթանկ չափեր, դրոշմել է իր կնիքը ամբողջ ընտանեկան և դասակարգային կեանքի և բարոյականութեան վրա:

Եւ միայն վերջին ժամանակները սկսեցին երեւալ մարդիկ, որոնք վճռեցին կանոնաւորել, որչափ կարելի է, աւետարական գործը, մարել իրանցից արատը, որ ծանրացած է դասակարգի վրա և մոյցնել բարեփոխութիւնների արհեստի գործադրութեան մէջ: Այսպիսի այդպիսի անձնաւորութիւններ դեռ չափ տակաւին են. իսկ ընդհանրութիւնը ամենամոխրիկ միջակ է:

Այժմ առաջ ունենալով, որ բարեխղճութիւնը, աղետութիւնը, յիստիկութիւնը միայն մասնագիտութիւն սովորելով չէ իւրացվում, որ նրանք հետեւանք են դաստիարակութեան և ընդհանուր կրթութեան, չէ կարելի բաւականապէս միայն զուտ հայապահպան մասնագիտութեան ուսումը նախընտրելու: Գործի համար օգտաւէտ և նպատակաւոր կը լինէր, որ աւետարականների ընդհանուր կրթութեան աստիճանը առհասարակ բարձրացվէր, և ուրեմն՝ զարթոնքի մէջ այդ կողմի վրա դարձնա՛ծ լինէին ոչ պակաս ուշադրութիւն, քան՝ մասնագիտական պատրաստութեան վրա:

Նա մասնաւոր այժմ, երբ հաղորդակցութիւնը ընդհանուր կրթութեան մէջ մեծա-նում է, միջադժային վաճառանոցը սկսում է աղղել և մեր վաճառանոցի վրա, անհրաժեշտ է որ աւետարական կրթութեան աստիճանը բարձրանա շատ կարճ միջոցով, որպէս զի օտար կապիտալը ձեռք չը ձգէր մեր հարստութիւնները: Հաւատարմութեան, որ կովկասի վաճառականները ամենամեծ համակրութեամբ կը վերաբերվէին, թէ՛ աւետարական զարթոնքից մէկն էլ բացվէր Անդրկովկասում:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«L'art au Caucase», par J. Mourier. Paris, 1896

Թիֆլիսցիներին լաւ յայտնի ֆրանսիացի Ժան Մուրիէ, որ մի քանի ժամանակ առաջ հրատարակում էր Թիֆլիսում ֆրանսիական լեզուով «Le Caucase Illustré» պարբերական թերթը, ձեռնարկել է այժմ հրատարակել Պարիզում մի նոր աշխատութիւն «Արտուստը կովկասում» վերնագրով:

Այդ աշխատութիւնը երկու մասից բաղկացած մի ստուար հատոր կը լինի: Առաջին մասը կը պարունակէ իր մէջ «Կրօնական արուեստը» (Art religieux), այն է կրօնական ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնը, ոսկերչութիւնը, արծնը, նկարչութիւնը, ձեռագիրները և ասեղնագործութիւնը: Երկրորդ մասը կը պարունակէ — արդիւնաբերական արուեստը, ինչպէս՝ կահ, ապակե ամանները, ոսկերչական իրեր, արծնապակի, գոհարեղէն և գահարեղէնի վրա քանդակագործութիւն, բնական և կահ-կարապիք, գորգ, կերպաս, հիւսուածք և բրօնզ:

«Այդ ամբողջ գրութեամբ, ասում է Մուրիէ, կը լինի վրաց և հայոց արուեստի մասին մինչև այժմ երեքստ աշխատութիւններից ամենալիակա-տարը, հետազոտութիւններից՝ ամենաճշգրիտը»:

Առ այժմ հրատարակված է առաջին մասի այն կտորը, որ վերաբերում է կովկասի կրօնական ճարտարապետութեան: Այդ հատորում արված են Մցխեթի, Անիի, Գուրպիսի, Անանուրի, Գէլա-թի, Կաթէնի, Էջմիածնի, Չուգղիի վանքերի և մայր եկեղեցիների պատկերները, մի քանի քան-դակագործութիւններ և օրնամենտներ, ինչպէս և Հնդկիսի վանքի յատկաբոլոր:

Յայտնի է, որ ճարտարապետութիւնը կարող է այս կամ այն ժողովրդի զարգացման մասին ճիշդ ապացույցներ հայթայթել: Ուսումնասիրելով կովկասի գլխաւոր յիշատակարանները — ո՛ր ու-մէն տեսնուր, կարելի է ձեռք բերել նրա բնա-կիչների պատմութեան մասին ամենատույգ տե-ղեկութիւններ: Հիմն ընդունելով այդ տեսակէ-տը, ահա ինչ է ասում հեղինակը հայերի և վրա-ցիների մասին.

«Հայերը և վրացիները քաղաքական կեանքի մէջ ունեցել են մի քանի, աւելի կամ պակաս փոխաւոր շրջաններ, բայց երբեք չեն կարողա-ցել հիմնել այնքան հոգր պետութիւններ, որ կա-րողային վերջնական կերպով յետ մղել իրանց զբաղմունքի արշաւանքները: Հայաստանը, հին առաջ հռոմայեցիների և պարսիկների, իսկ յետոյ թուրքացիների և արաբների մէջ: Վրացիները մի քիչ աւելի երկար ընդգրկվել են ցոյց տուե-ցին, որովհետև նրանց աշխարհագրական դիրքը աւելի նպաստաւոր էր: Չը նայելով դրան, նրանք ընկճվում էին հենց որ մի լուրջ յարձակումը լինէր կրում և յաջողաբար անցան պարսիկների, թուրքերի ու ռուսների տիրապետութեան ներ-քայ: Վրացիները գեղեցիկ էին, կայտառ, քաջ և առատաձեւ: Նրանք հիւրասէր են և պատուի զգացումը նրանց մէջ շատ զարգացած է, բայց նրանք ծոյլ են, անհոգ և զուրկ հետեւողականու-թեան ու տոկոսութեան որ և է ոգուց: Հայերը դրական և գործնական մտքի տէր մարդիկ են, եղանկի ընդունակութիւն ունեն վաճառականու-թեան մէջ և ամեն միջոց որոնում են իրանց հարստութիւնը կրկնապատկելու համար: Հայը վրացուց աւելի քիչ ասպետական է և աւելի քիչ քաջ, խորամանկ է և միայն մի բան (sic) է սի-րում — փող, և այսօր նա կորցրել է բոլոր այն արտիստիկական յատկութիւնները, որոնցով առաջ նա տալարված է եղել: Մի խօսքով, կովկասում միայն երկու աղգութիւններ ցոյց են տուել մը-տաւոր արժէք — վրացիները և հայերը: Բայց այդ արժէքը բաւական միջակ է և նրանց բարոյական յատկութիւնները գերակշիռ չեն նրանց մտաւոր յատկութիւններից»:

Եւ ահա ճարտարապետութիւնը կարող է ցոյց տալ, որ այդ գնահատութիւնը ամեն կողմից ճիշդ է: Ոչ հայերը, ոչ էլ վրացիները չեն կարո-ղացել բոլորովին մի ինքնուրոյն արուեստ ստեղ-ծել, նրանց ճարտարապետութիւնը, իրանց երկ-րի նման, կրել է միշտ օտար աղեղնութիւնը: Նրանց բարոյական տկարութիւնը երևում է ի-րանց շինութիւնների փոքրութիւնից: Հայաստա-նի մայրաքաղաք Անիի մայր-եկեղեցին, այդ քա-

ղաքի ամենապայծառ օրերում, ինչպէս և Գու-թայի մայր եկեղեցին, արեւմտաքի գիւղերի եկեղեցիներից աւելի մեծ չեն»:

Համաձայնելով Մուրիէի արտայայտած մի քա-նի կարծիքների հետ, մենք չենք կարող ընդու-նել նրա այն առաւելութիւնը, թէ շինութիւննե-րի փոքրութիւնը հետեւանք է հայերի և վրացի-ների բարոյական տկարութեան: Այդ տեսակ դա-տալձիռ արտասանելու համար պէտք է շատ խոր կերպով ուսումնասիրել լինել այդ երկու աղգե-րի պատմութիւնը: Օրինակ, մենք գիտենք պատ-մութիւնից, որ քրիստոնէութիւնից առաջ, հե-թանոսութեան ժամանակ, Հայաստանի մեհան-ները շատ քեղ և լայնածաւալ էին. մինչև այ-սօր ևս Գառնի դաւառում գտնվում են Տրդա-տի պալատի աւերակները, որոնք ցոյց են տա-լիս թէ որքան հոյակապ է եղել մի ժամանակ այդ շինութիւնը:

Մուրիէի կարծիքով, հայկական — վրացական ճարտարապետութեան գլխաւոր տարրերը ամ-փոփված են էջմիածնի մօտ գտնվող Հնդկիսի մէ-վանքի շինութեան մէջ: Այդ տաճարը Հայաստա-նի ամենահին եկեղեցին է, ասում է հեղինակը, նրանից յետոյ գալիս է Ուգուչլարի եկեղեցին, որ շինված է 718—729 թ.ին:

Մուրիէի աշխատութեան վրա մենք աւելի եր-կար կանգ կառնենք, երբ նրա բոլոր հատորնե-րը լոյս կը տեսնեն:

Հ. Ա.

ՆԱՄՍԿ ՕՐԵՍՈՍՅՈՒՆ

Յունվարի 22-ին

Յայտնի է, որ մեր չքաւոր ուսանողներն օգ-նող՝ ընկերական կասանների գլխաւոր և հաս-տատուն եկամուտը հայկական երեկոյթներից է, որոնք կազմվում են համալսարանական մի քանի քաղաքներում, տարբեր մէկ կամ երկու անգամ: Որքան էլ համեստ լինի այդ երեկոյթներից ստա-ցած օգուտը, բայց դա գերադասելի է միւս մի-ջոցներից այն նկատմամբ, որ ընկերական կաս-սայից նպատակ ստացող ուսանողը շատ աւելի անկախ ու ինքնուրոյն է զգում իրան նիւթակա-նապէս, քան զանազան «բարեբարներից» նպաստ ստացողը: Այդ բանը լաւ գիտեն իրանք ուսա-նողները, և այդ պատճառով շատ ուրախալի է տեսնել, թէ ինչպէս բոլոր քաղաքներում զուգահե-ռաբար առաջադիմում են այդ երեկոյթները: Երկրորդական թիւարձաններից, շինութիւններից անցնում են դէպի առաջնակարգ քեղ շինու-թիւնները, հայ կալօնիաների օգնութեան շրջա-նից անցնում են դէպի ուրիշ հասարակութիւնը, որի համեմատական բարձր պահանջներին բաւա-կանութիւն տալու համար ուսանողները նախա-ձեռն ջանքեր են գործ դնում այդ երեկոյթները բովանդակութեան կողմից էլ հետաքրքիր ու կեն-դանի դարձնելու:

Թէ և Օրենսդրում հայ ուսանողների թիւը շատ փոքր է, սակայն նրանց կազմած երեկոյթները, գոնէ այս վերջին երկու տարին, շատ աջող են լինում: Նախաձեռնող անսպասելի աջողութիւն ունեցաւ յունվարի 21-ին՝ «Վերականգնելու Ժո-ղովարանի» դաշինքներում կայացած երեկոյթը:

Երկուսն իսկ, որի մէջ կային «միջազգա-յին» Օղեստայի բոլոր աղբորթիւնների ներկայա-ցուցիչներից, Միլանիոյի ղեկավարութեամբ եր-գեց ժողովրդական ու աղգային երգեր, «Ձար-թիւր, սիրտ իմ», «Ելք հեռանաւ», «Լուրիկը» «Գեղի մեռնիմ» և այլն: Նախաձեռնող օպերայի երգչուհի, տիկին Գէնկուօլմ հրաշալի երգեց «Վիճեմանկը», որը կրկնել տուեց հասարակու-թիւնը: Տիկին Տամալինա, ուսաց օպերայի ար-տիստուհին՝ «Չայն տուր, ով ծովակը» երգեց մեծ աջողութեամբ, արտասանելով բառերը ինչ-պէս մի հայուհի: Օրիորդ Շրայտիլի «Ո՛հ ինչ ա-նուշ» մեծ հրճանք պատճառեց հասարակու-թեան: Ձէյթիւնի մարշով, որը երգեց իսկաւր Սթոյնկու հետ, վերջացաւ երեկոյթի կոնցեր-տային մասը, որից յետոյ սկսեցին պարերը:

Երեկոյթը վերջացաւ առաւօտեան ժամ 6-ին: Հանդիսականների մեծ մասը օտարազգիներ էին: Հայ կալօնիայի մեծ մասը տնտարբերութիւնը ակներև էր: Չուտ արգիւնքը 600 ռ. աւելի է: Շնորհակալութեան արժանի են օր. կասապեանը ու տիկին ու օր. Գոյլեանները:

Գ. Երեմեան







